Հետազոտական աշխատանք

Կազմակերպության տվյալներ ● Անվանում, հասցե ● Տնօրեն ● Էլ.հասցե ● Հեռախոս	<<Մասնակցային դպրոց>> կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության թեմա/վերնագիր ● Հետազոտության թեմա	Ուսուցիչ-ծնող համագործակցության դերը սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության գործընթացում
Ուսուցչի տվյալներ ● Ա.Ա.Հ. ● Մասնագիտություն ● Հեռախոս ● Էլ. հասցե ● Դասավանդվող առարկաներ ● Դասարաններ	Բաղդասարյան Լուսինե Էդիկի Ֆիզիկայի ուսուցչուհի 094-31-55-56 baghdasaryanlusinee@gmail.com «Ֆիզիկա» VII-XII
Ուսումնական հաստատության տվյալներ ● Անվանումը, հասցե ● Հեռախոս ● Էլ. հասցե (տնօրենության) ● Web կայքի հասցե	«ՀՀ Արարատի մարզի Վարդաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ Գ.Վարդաշեն Մհեր Մկրտչյան 11 093-19-08-76 vardashen@schools.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

1. Ուսուցիչ–ծնող համագործակցության տեխնոլոգիաները և դրանց դերը սովորողների կրթության կազմակերպման գործընթացում.....5

2. Ուսուցիչ–ծնող համագործակցության դերը ընտանեկան դաստիարակության գործընթացում.....10

Եզրակացություն.....17

Օգտագործված գրականության ցանկ.....19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Ընտանիքը բաց համակարգ է, որի տարրերը փոխազդում են միմյանց և շրջապատող համակարգերի հետ: Արտաքին կենսաբանական և սոցիալական համակարգերի հետ <<ուղիղ և հետադարձ կապերի>> դրսևորման հետևանքով ընտանիքը հանդես է գալիս որպես անընդհատ զարգացող համակարգ: Արտաքին ուժերը կարող են ընտանիքի վրա ունենալ դրական կամ բացասական ազդեցություն, ընտանիքն, իր հերթին, նույն կերպ կարող է ազդել այլ համակարգերի վրա:

Ընտանիքը մարդու վերարտադրության սոցիալական համակարգ է, որ պայմանավորված է արյունակցական կապի, ամուսնության կամ մարդկանց միավորող կենցաղային ընդհանրությամբ, փոխադարձ բարոյական պատասխանատվությամբ և փոխօգնությամբ:

Ծնող- ուսուցիչ կապի պահպանումը ուսումնական գործընթացում աշակերտի հաջողության բանալին է, իսկ ծնողների և դպրոցի միջև կապի բացակայությունը, ինչպես նաև դպրոցի ու ծնողների չհամաձայնեցված գործողությունները վնասում են երեխայի կրթությանն ու դաստիարակությանը:

Երկկողմանի համագործակցության շնորհիվ կարելի է սովորողի համար ապահովել այնպիսի կրթական միջավայր, որտեղ վերջինս իրեն կզգա պաշտպանված ու կարևոր: Ծնողուսուցիչ համագործակցությունն իր դրական ազդեցությունն է ունենում սովորողի առաջադիմության, արժեհամակարգի ձևավորման, հաջողություններ և հաղթանակներ ունենալու վրա:

Աշխատանքի նպատակը և խնդիրները: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել ուսուցիչ-ծնող համագործակցության դերը սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության գործընթացում:

Նշված նպատակն իրագործելու համար աշխատանքի հիմքում դրվել և լուծվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- ուսումնասիրել ուսուցիչ-ծնող համագործակցության տեխնոլոգիաները և դրանց դերը սովորողների կրթության կազմակերպման գործընթացում,
- ներկայացնել ուսուցիչ-ծնող համագործակցության դերը ընտանեկան դաստիարակության գործընթացում:

Աշխատանքի մեթոդական և տեղեկատվական հիմքերը: Աշխատանքում առաջադրված խնդիրների լուծման համար մեթոդական հիմք են ծառայել մի շարք ինտերնետային հոդվածները:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքային տեքստը կազմում է 19 տպագրական էջ:

ԳԼՈՒԽ 1. ՈՒՍՈՒՑԻՉ-ԾՆՈՂ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Դպրոցի կյանքում ծնողների ներգրավվածությունը առանձնահատուկ նշանակություն ունի աշակերտների հաջողության համար: Ինչպիսին էլ որ լինի ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակը, ծնողի մասնակցությունը երեխայի կրթության գործընթացին, աշակերտի զարգացման վրա մեծ ազդեցություն է գործում:

Հետազոտումների համաձայն, դպրոցականները, որոնց ծնողները ակտիվորեն մասնակցում են կրթական գործընթացին, ավելի լավ արդյունքների են հասնում՝ ստանում են ավելի լավ գնահատականներ, ունեն ավելի բարձր ակադեմիական ձեռքբերում և ավելի որակով կատարած տնային առաջադրանքներ, նրանց հաճախման ցուցանիշն ավելի բարձր է և աչքի են ընկնում դրական վարքով, բարեհամբույր են դպրոցի նկատմամբ և ունեն սեփական ածի և հնարավորությունների նկատմամբ հավատ:

Ծնողների հետ ուսուցչի աշխատանքի մեթոդները ու ձևերը բազմաթիվ են, օրինակ՝ զրույց, բանավեճեր, դերային խաղեր, ցերեկույթներ, մրցույթներ, արշավներ և էքսկուրսիաներ, գրական ունկնդրումներ,

հասարակական աշխատանք և այլն: Դրանց մի մասը իրականացվում է դասղեկական ժամերի ընթացքում կամ արտադասարանային, արտադպրոցական պարապմունքների ու միջոցառումների ժամանակ[1]:

Ուսուցչի մանկավարժական վարպետությունը, տակտն ու հեղինակությունը մեծ դեր են խաղում աշակերտների բարոյական դաստիարակության գործում: Ըստ ամենայնի խրախուսելով և զարգացնելով աշակերտների նախաձեռնությունն ու ինքնուրույնությունը՝ ուսուցիչը շտկում է նրանց հետ հարաբերությունների ոճը նրանց առող ինքնուրույնության համապատասխան:

Աշակերտների նկատմամբ հարգանքը դպրոցում պետք է լինի ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմքերի հիմքը: Ուսուցչի հարգանքն աշակերտների նկատմամբ՝ որպես անձի՝ դա աշակերտի անձը ճանաչելու, նրա արժանապատվությունը վիրավորելու անթույլատրելիությունն է: <<Անձի պրոբլեմը ,–գրել է Մակարենկոն,–կարող է լուծվել, եթե ամեն մարդու մեջ կարողանանք տեսնել անձնավորությունը>>:

Ուսուցիչ–ծնող համագործակցությունը կարևոր նախադրյալ ու մանկավարժական պայման է՝ ապահովելու համար երեխաների դաստիարակությունը և իրականացնելու դպրոցի կրթական նպատակները[2]:

Ուսուցչի և ծնողների համագործակցությունը արդիական է, քանի որ երեխայի բազմակողմանի դաստիարակությունը պայմանավորված է միմյանց նկատմամբ երկկողմանի վերաբերմունքի բնույթով, որի հիմքում պետք է լինեն վստահության, փոխադարձ հարգանքի, փոխօգնության, օժանդակության, համբերատարության ու հանդուրժողականության սկզբունքները:

Երեխաների, ծնողների, ուսուցիչների միջև համագործակցային հարաբերությունների ձևավորումն ամենից առաջ պայմանավորված է այն հանգամանքով, թե այդ գործընթացում ավագների միջև ինչպիսի փոխհարաբերություններ են հաստատվում:

Ծնողները և ուսուցիչները նույն երեխաների դաստիարակներն են: Հետևաբար դաստիարակությունն արդյունավետ կլինի միայն նրանց համագործակցության պայմաններում, երբ ձևավորվեն դաստիարակության գործընթացի միասնական նպատակներ, ձգտումներ ու հայացքներ, համատեղ ուժերով մշակվեն դաստիարակչական խնդիրներն ու դրանց լուծման ուղիները:

Ծնողների և ուսուցիչների համագործակցությունը ենթադրում է նաև երեխային ներկայացվող միասնական պահանջների, նրա զարգացման ծրագրերի և մեթոդիկաների մշակում:

Ուսուցիչների և ընտանիքի փոխներգործության բնույթը պայմանավորված է դպրոցի նկատմամբ ծնողների վերաբերմունքով, ինչպես նաև այն հանգամանքով, թե վերջիններս, ըստ իրենց իմացական կարողությունների, հայացքների ու դիրքորոշումների, որտեղ են իրենց տեսնում դաստիարակության գործընթացում: Այդ պատճառով էլ ընտանիքի հետ աշխատանքն անհրաժեշտ է կառուցել տարբերակված, չպարտադրել փոխներգործության միատեսակ ձևեր, այլ կողմնորոշվել դեպի ծնողների պահանջմունքները, ընտանիքի և ընտանեկան դաստիարակության յուրահատկությունները, ծնողներին աստիճանաբար ներգրավել դպրոցի,

[1]Голованова Н.Ф., Педагогика: Учебник и практикум для академического бакалавриата//Н.Ф. Голованова//Люберцы: Юрайт, 2016, С. 101.
[2]Щербакова Е.В., Педагогика. Краткий курс.: Учебное пособие//М.Н. Недвецкая, Т.Н. Щербакова, Е.В. Щербакова//М.: УЦ Перспектива, 2013, С. 59.

դասարանի և իր երեխայի գործերում: Իսկ դպրոցի և ծնողների համագործակցության հիմքը խմբային ու անհատական աշխատանքի ձևերն են:

Միաժամանակ կան հիմնախնդիրներ, որոնք մտահոգում են բոլոր ծնողներին կամ էլ կապված են դասարանում երեխաների դաստիարակության գործընթացի հետ: Այսպիսի հարցերը քննարկվում են ընդհանուր ժողովների ժամանակ: Ծնողական ժողովը ծնողների հետ աշխատանքի հիմնական ձևն է, որի միջոցով լուծվում են դասարանական կոլեկտիվի հիմնախնդիրները: Ծնողական ժողովների ժամանակ փոխներգործության կայացման առումով էական նշանակություն ունի ուսուցիչների շփման ոճը: Ժողովների ժամանակ ուսուցիչների մենախոսությունը պետք է տեղը զիջի ծնողների հետ երկխոսությանը, որի ընթացքում փոխանակվում են գաղափարներ, կարծիքներ, համատեղ որոնվում առկա հիմնախնդիրների լուծումներ:

Ուսուցչի և ընտանիքի փոխներգործության ակտիվ մեթոդներ կարող են լինել փորձի փոխանակման համաժողովները, բանավեճերը, ուսուցիչների և մասնագետների (բժիշկներ, հոգեբաններ, սոցիալական աշխատողներ և այլն) հետ հանդիպումները: Ուսուցիչը ծնողներին ներգրավում է դպրոցի կառավարման և դասարանի գործունեության կազմակերպման հետևյալ տիպի աշխատանքներում.

- երեխաների դաստիարակությանը վերաբերող դպրոցական կյանքի հիմնախնդիրների քննարկում և լուծում,
- ծնողների մասնակցություն դաստիարակչական աշխատանքներին և միջոցառումներին, ուսումնական աշխատասենյակների ձևավորմանը, արտադասարանական աշխատանքների կազմակերպմանը,
- ծնողների մասնակցություն դպրոցում և դասարանում ինքնակառավարման մարմինների (ծնողական ժողովներ, համաժողովներ, ծնողական կոմիտեներ և այլն) ստեղծմանը, դրանց գործունեության կազմակերպմանը[3]:

Ուսուցիչների կարևորագույն խնդիրներից են ընտանիքի միասնության ու համախմբվածության նախադրյալների ստեղծումը, ծնողների և երեխաների փոխըմբռնման մթնոլորտի, ընտանիքում երեխաների համար հարմարավետ միջավայրի նախապատրաստումը, նրանց համատեղ գործունեության և շփման հմտությունների ձևավորումը: Այդ կապակցությամբ նպատակահարմար է ծնողների և երեխաների համատեղ ստեղծագործական միջոցառումների կազմակերպումը՝ նվիրված ընտանեկան լավագույն ավանդույթների և սովորությունների ներկայացմանը:

Ընտանիքի հետ աշխատանքի ընթացքում ուսուցիչը կիրառում է մի շարք տեխնոլոգիաներ, այդ տեխնոլոգիաների թվին է դասվում ախտորոշիչ տեխնոլոգիան:

Ախտորոշող գործառույթը նախնական ընթացիկ և վերջնական փուլերում այսպիսի փոխլրացնող համակարգում կարող է ախտորոշել և բացահայտել մարդու մշտական որոնումները գոյի, կեցության, հավերժության, երջանկության: Երբ մենք ախտորոշում ենք անձի զարգացման կենսաբանական, սոցիալական ծրագրերը, առաջին հերթին կարևորում ենք սոցիալական դաստիարակությունն ու կրթությունը, որոնք

[3]Мандель Б.Р., Педагогика: Учебное пособие //Б.Р Мандель//М.: Флинта, 2014, С. 84.

մանկավարժական համակարգի հենասյուներն են, իսկ դրանց ձևավորման առանձնահատկություններն ու էությունը պայմանավորված են մշակույթով:

Ծնողների հետ աշխատանքի ընթացքում տարբեր իրավիճակների ախտորոշման դեպքում անհրաժեշտ են բազմակողմանի ուսումնասիրություններ: Որքան խորությամբ, արտաքին և ներքին էությունը բացահայտող ընթացքով է դիտարկվում իրավիճակը, այնքան ախտորոշման նպատակը տրոհվում է ենթանպատակների, առաջադրվում են լուծումներ պահանջող խնդիրներ, որոնք ենթադրում են ախտորոշողի կողմից կոնկրետ մեթոդների կիրառում: Երևույթների միջև դրսևորվող և չդրսևորվող տրամաբանական կապերի բացահայտումը, պատճառահետևանքային վերլուծությունները հնարավորություն են տալիս առավել ճշգրտորեն ընտրելու գերակայող մեթոդը:

Ախտորոշման ընթացքում մեթոդները կիրառելիս հնարավորինս պետք է բացառել պատահականությունների դրսևորումները, քանի որ դրանք փոխում են ուսումնասիրությունների ընթացքը, առաջ բերում սխալվելու հավանականություն:

Ընտանիքի հետ աշխատանքի ընթացքում կիրառվում է նաև կանխարգելող գործառույթը, որի կիրառության հիմքում անձի և կոլեկտիվի համատեղ ուսումնասիրության սկզբունքն է: Այն հիմք է ընդունում մանկավարժական մարդաբանության ուսումնասիրության օբյեկտը՝ <<մարդ-մարդ>> հարաբերակցությունը, որը դիտարկվում է կրթական համակարգում:

Այն դեպքում, երբ ախտորոշող մանկավարժը անձի անհատական առանձնահատկությունները գերադրելի է դարձնում կոլեկտիվից, անձին դիտարկում է սոցիալական առանձին միջավայրում, սխալման հավանականությունը մեծանում է: Մեկ այլ ծայրահեղություն է, երբ կոլեկտիվի ներգործությունն է անձի սոցիալականացման վրա բացարձականացվում: Իրական արդյունքներ կարելի է ակնկալել այն դեպքում, երբ երկուստեք ախտորոշվեն և կանխատեսվեն անձ-կոլեկտիվ համագործակցության եզրերը:

Ընտանիքի հետ աշխատանքի ընթացքում կանխարգելող գործառույթի կիրառությունն արդունավետ է, եթե հաշվի է առնվում զարգացման ընթացքում փոփոխությունների գրանցման և պարբերաբար վերլուծության սկզբունքը: Զարգացումը հանգեցնում է քանակական և որակական փոփոխությունների՝ տարիքային, անհատական, հոգեբանական, սեռային առանձնահատկություններին համապատասխան, որոնք արտահայտվում են սոցիալականացման ընթացքում:

Հաջորդիվ կիրառվող գործառույթը վերականգնողական գործառույթն է, որը հնարավորություն է տալիս համակարգելու և միջգիտական տրամաբանական աղերսներ ձևավորելու մանկավարժության և մարդաբանական գիտությունների ամբողջական համակարգում:

Հիմք ընդունելով ամբողջական ուսումնասիրությունների սկզբունքը՝ այս գործառույթի կիրառությունը հնարավորություն է տալիս որպես մեթոդաբանական հիմք դիտարկելու մանկավարժական մարդաբանության ձեռքբերումները, որն իր հերթին նույնպես համակարգում է տարբեր գիտությունների գիտելիքները, նորարարությունները ու նորամուծությունները՝ բնություն-մարդ-կրթություն համակարգում:

Ամփոփելով հարկ եմ համարում նշել, որ ուսուցիչն իրականացնում է նպատակասլաց գործունեություն երեխաների և նրանց ծնողների միջև ներդաշնակ հարաբերությունների ձևավորման ուղղությամբ, ստեղծում ծնողների նկատմամբ հարգալից վերաբերմունքի մշակման իրավիճակներ:

ԳԼՈՒԽ 2. ՈՒՍՈՒՑԻՉ-ԾՆՈՂ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Անձը, որպես ընտանիքի անդամ, բնութագրվում է երկու կողմերով: Մի կողմից որոշիչ են նրա պահանջմունքները, դրդապատճառները ու շարժառիթները, որոնք բավարարման հնարավորություն են ստանում ընտանիքի գործառման ընթացքում: Մյուս կողմից այն ընտանեկան դերերն են, որոնք կատարում է անձը՝ լինելով ընտանիքի անդամ: Եթե առաջինն, իր բնույթով հոգեբանական է, ապա երկրորդն ունի ընդգծված հասարակական բնույթ:

Այնպես որ, ընտանիքի անդամների պահանջմունքների և նրանց կողմից իրականացվող դերերի փոխհարաբերությունների հետազոտությամբ կարելի է բացահայտել ընտանիքի կառուցվածքում հոգեկան և հասարակական բաղադրիչների փոխհարաբերությունների բնույթը, ընտանիքի գործառման վրա անհատական և հասարակական գործոնների նշանակությունը:

Կարևորվում է այն, որ ժամանակակից հոգեբանության համակարգում անձի մոտիվացիոն ոլորտի՝ պահանջմունքների, դրդապատճառների ու շարժառիթների խնդիրը չի ստանում միանշանակ լուծում: Բազմաթիվ հարցերի վերաբերյալ հետազոտողների կարծիքները էականորեն տարբերվում են: Այդուհանդերձ, անձի մոտիվացիոն բաղադրիչները մեծամասամբ դիտարկվում են որպես նրա ակտիվության հիմնական խթաններ:

Այսպիսով, անձի, որպես ընտանիքի անդամի դրսևորումները պայմանավորվում են նրա մոտիվացիոն ոլորտի, մասնավորապես՝ պահանջմունք ների բնույթով: Ընդ որում, ընտանիքի գործառումն անմիջականորեն կապված է ընտանիքի անդամների պահանջմունքների բավարարման չափից, այստեղ ամենևին կարևոր չէ պահանջմունքի բնույթը:

Դաստիարակությունը որոշակի տեխնոլոգիաների համակարգ է, որն ուղղված է երեխայի անձի նպատակաուղղված ձևավորմանը: Հասարակական, արտադրական, մշակութային կյանքին նախապատրաստելու համար:

Երեխաների դաստիարակության ժամանակ առաջին հերթին հարկավոր է առաջացնել երեխայի մոտ անհատականություն: Բայց չի կարելի մոռանալ համընդհանուր արժեքները – վարքի կանոններ, բարոյականություն և կոլեկտիվի և հասարակություն վրա ներգործելու բարեխիղճ մեթոդներ, որոնք ապագայում կօգնեն լինել ինքնուրույն և կարողանալ գործել որոշակի կերպով:

Առանձնացնում եմ ընտանեկան դաստիարակության հետևյալ ոճերը.

1. Հեղինակավոր (դեմոկրատական): Հեղինակավոր ոճը ենթադրում է երեխայի հանդեպ ջերմ հույզեր և բարձր աստիճանի վերահսկողություն ծնողի կողմից:

Հեղինակավոր ծնողներն ունեն կյանքի մեծ փորձ և պատասխանատվություն են կրում երեխայի դաստիարակության համար: Նրանք չեն պահանջում երեխայից ավելին, քան նա կարող է անել, ավելի շուտ՝ ուշադրություն են դարձնում զավակի կարգապահությանը: Ծնող–երեխա շփումը կառուցվում է դեմոկրատական սկզբունքով:

2. Ավտորիտար (<<auctoritas>>՝ իշխանություն): Ավտորիտար դաստիարակության ոճը տարբերվում է երեխայի հանդեպ դրսևորվող մերժողականությամբ կամ ցածր հուզականությամբ, ինչպես նաև ենթադրում է բարձր վերահսկողություն երեխայի նկատմամբ:
3. Լիբերալ: Լիբերալ ոճի դաստիարակության առանձնահատկությունները կայանում են երեխայի հանդեպ ջերմ հուզական և ցածր աստիճանի վերահսկողության դրսևորմամբ: Դաստիարակության այս ոճը գրեթե չի ենթադրում որևէ պահանջ կամ օրենք:
4. Ինդիֆերենտ: Դաստիարակության ինդիֆերենտ ոճը բնութագրվում է երեխայի հանդեպ ցուցաբերվող հուզական սառնությամբ ծնողների կողմից[3, էջ 71]:

Երեխայի նկատմամբ վերահսկողությունը ցածր մակարդակի է, կարծես թե ծնողն ամեն կերպ <<ետ է մղում իրենից երեխային>>, չի հետաքրքրվում երեխայի ցանկություններով և հետաքրքրություններով: Քիչ են նաև երեխայի հանդեպ պահանջները:

Ցուրաքանչյուր դաստիրակության ոճ մեծ ազդեցություն ունի երեխայի անձի ձևավորման գործընթացում: Չկան ճիշտ կամ սխալ դաստիրակության ոճեր: Ամեն մի դաստիրակության ոճ կարող է ունենալ և՛ դրական, և՛ բացասական ազդեցություն երեխայի անձի ձևավորման վրա, հետևաբար անհրաժեշտ է զգույշ մոտենալ այս կամ այն դաստիրակության ոճի ընտրության ժամանակ:

Ցուրաքանչյուր դաստիրակության ոճի ուրճացումը, ծայրահեղացումը կամ չափից դուրս լայն կիրառումը կարող է բացասաբար ազդել երեխայի անձի ձևավորման և զարգացման գործընթացի վրա:

Ինչ վերաբերվում է ավտորիտար դաստիրակության ոճին, ապա կարելի է նկատել, որ հենց ավտորիտար ծնողներն են շատ հաճախ երեխաներին ենթարկում բռնության:

Այս ոճով դաստիարակող ծնողները ըստ էության կարող են լինել այն անձինք, ովքեր ևս իրենց մանկության տարիներին ենթարկվել են բռնության իրենց ծնողների կամ այլ անձանց կողմից:

Անձնավորությանը ձևավորելու համար մանկավարժի ջանքերը աշակերտի կողմից կընդունվեն պատասխան դրական ռեակցեաներով: Որոշ իմաստով կարելի է ասել, որ դաստիարակությունը փոխադարձ բարի ցանկության, փոխադարձ վստահության ու հարգանքի արտահայտությունն է, որոնք սահմանվում էին ուսուցչի և աշակերտների միջև[4]:

[4]Воронов В.В., Педагогика школы: новый стандарт//В.В. Воронов// М.: ПО России, 2012, С. 74.

Դպրոցականների դաստիարակության գործում մանկավարժական վարպետությունը ունի կենսահաստատ ուժ և վճռորոշ նշանակություն: Ուսուցչի մանկավարժական վարպետությունը արդյունավետ ուսուցման նախապայմանն է: Մանկավարժական վարպետությունը ուսուցչի անձնական որակների, գիտելիքների, մանկավարժական կարողությունների ու հմտությունների համադրությունն է:

Մանկավարժական վարպետությունը, ինչպես նշում է Մակարենկոն, տաղանդավոր մարդկանց հատկությունը չէ: Դա մասնագիտություն է, որը պետք է սովորեցնել, ինչպես սովորեցնում են երաժշտին, բժշկին: Այն աճում է փորձի կուտակման, մանկավարժական գիտելիքների, մանկավարժական կրթության ընդլայնման ընթացքում:

Ուսուցիչը պետք է լինի իմաստուն դաստիարակ, որը կարողանում է յուրաքանչյուր սովորողի մեջ տեսնել նրա անձի յուրահատկությունն ու անկրկնելիությունը, մանկավարժական ախտորոշման միջոցով պետք է խորությամբ ուսումնասիրի ամեն մի սովորողին՝ մղելով նրանց համագործակցության, հանդուրժողականության, ստեղծագործականության, քննադատական մտածողության խթանման, արժեհամակարգի ձևավորման:

Դաստիարակչական աշխատանքները դասղեկը և տյուտորը պետք է նախագծեն սովորողների հետ միասին, հաշվի առնի նրանց հետաքրքրությունները, հնարավորությունները, ցանկությունները, փոխհամագործակցի ծնողների հետ:

Յուրաքանչյուր դասղեկի գործունեության նպատակն է՝ ստեղծել պայմաններ սովորողների ինքնազարգացման և ինքնաիրացման, հասարակության մեջ նրա բարեհաջող ինտեգրման համար, ստեղծել միասնական համերաշխ կոլեկտիվ: Այսօր դժվարացել է այդ գործն այնքանով, որ դպրոցներում գնալով ավելանում է խոցելի երեխաների թիվը, որոնք հասարակության մեջ ներառման, ինտեգրման խնդիր ունեն: Այդ նույնը գործի առյուծի բաժինը ևս ընկնում է դասղեկի ուսերին: Որպեսզի ճիշտ կատարի իր գործը, նա պետք է անընդհատ կատարելագործվի, զբաղվի ինքնակրթությամբ, համագործակցի այլ մասնագետների, աշակերտների և ծնողների հետ:

Մանկավարժը մշտապես պետք է հաշվի առնի սովորողների տարիքային ու անհատական առանձնահատկությունները և ուսումնական հնարավորությունները: Մանկավարժի հաղորդած գիտելիքները պետք է ծառայեն մանկավարժական խնդիրների լուծմանը և ընկած լինեն նրա մասնագիտական կարողությունների հիմքում:

Դժվար է ասել, թե որտեղից է սկսում բազմահմուտ մանկավարժի գործունեությունը և որտեղ է ավարտվում: Յուրաքանչյուր քայլափոխի նա առնչվում է ուսումնադաստիարակչական որևէ երևույթի, փաստի, դեպքերի: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ դասավարի մասնագիտական գործունեությունը մի անծայրածիր, տարողունակ, անսահման և անեզր ասպարեզ է: Եվ որպեսզի նա կարողանա լուծել իր առջև հառած բոլոր խնդիրները, պարտավոր է տեղյակ լինել մանկավարժական գիտության բոլոր նորարարություններին, նոր հայեցակարգին, նոր նվաճումներին, առաջավոր փորձին:

Հետևապես, որքան տարողունակ է մանկավարժի վարպետությունը, այդքան տարողունակ պետք է լինի նաև նրա խելքը: Այլապես և՛ ուսուցիչը, և՛ աշակերտները զրկված կլինեն փոխազդեցությունների այն հարաբերակցությունից, որ պահանջում է ժամանակակից մանկավարժությունը:

Մանկավարժը կարող է ունենալ հարուստ գիտելիքներ, լայն մտահորիզոն, բազմակողմանի զարգացվածություն, սակայն չկարողանա իր իմացածը մատուցել աշակերտներին: Չկարողանա լուծել նրանց կրթական, դաստիարակչական և զարգացման խնդիրները: Այսպիսով, կարող ենք ճշել, որ լավագույն մանկավարժ լինելու համար որքան կարևոր են մասնագիտական գիտելիքները, այդքան անգամ էլ՝ նրա մանկավարժական վարպետությունը:

Մանկավարժական վարպետություն ունեցող մանկավարժը խորապես գիտակցում է, թե ուսուցման և դաստիարակության գործընթացներում երբ ինչ անել և դա ինչպես անել, որպեսզի ի կատար ածվի հետապնդվող նպատակը և ապահովվի բարձր արդյունքը:

Ուսուցչի աշխատանքների կենտրոնում սովորողի անձի ձևավորումն է: Պետք է ընդունել ժամանակակից հասարակության մեջ նրա արժեքն ու անհրաժեշտությունը, պետք է հիշել, որ յուրաքանչյուր երեխա պետք է ունենա իր տեղն ու դերն այս հասարակության մեջ:

Դաստիարակչական գործունեության մեջ կարևոր է համարվում ուսուցման և դաստիարակության մեջ հաջողության հասնելը: Հաջողությունը ծնում է ակտիվ աշխատելու լրացուցիչ ցանկություն, սովորողի մոտ ձևավորվում է արժանապատվություն: Սա ուսուցման, դպրոցի, գիտության և աշխատանքի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորման հաջողության գրավականն է:

Ժամանակակից հոգեբանությունը մարդու գործունեության հիմնական տեսակներ է համարում խաղը, ուսումը, աշխատանքը: Ընդ որում՝ յուրաքանչյուր տարիքի բնորոշ է որոշակի տեսակ: Սովորողների բազմակողմանի դաստիարակությունն ապահովելու համար անհրաժեշտ է համակողմանիորեն կազմակերպել նրանց գործունեությունը, այլ ոչ թե ստեղծել տարբեր միջոցառումների պարզ միագումար: Դաստիարակչական միջոցառումները լրացնում, ընդլայնում, միահյուսում, որակապես նոր մակարդակի են բարձրացնում անձի գիտելիքները, ունակությունները, հմտությունները, դիրքորոշումը և այլ հատկանիշներ, որոնք ձևավորվել են գործունեության հիմնական տեսակների միջոցով:

Քանի որ սովորողները զարգանում և ձևավորվում են գործունեության ընթացքում, ապա Կի և տյուտորի գլխավոր խնդիրն է լավագույն ձևով կազմակերպել գործունեության այն տեսակները, որոնք տվյալ տարիքում արդյունավետ են զարգացնում և ձևավորում սովորողի անձը:

Երեխայի դաստիարակության համար մեծ նշանակություն ունեն արտադասարանական աշխատանքները: Շատ երեխաների համար դրանք դպրոց գալու ևս մեկ առիթ են, որոնք վատ սովորող աշակերտին հնարավորություն են տալիս վերագտնելու իրեն: Դասերից հետո դասարանի կյանքին մասնակցելը հնարավորություն է տալիս երեխային բացահայտելու ինքն իրեն, իր վրայից հանելու անպիտանելիության պիտակը և իր ուրույն տեղը գտնելու հասակակիցների կողքին: Այս ուղղությամբ դասղեկի աշխատանքում մի

շատ կարևոր պահ կա՝ նա պետք է ազատ ընտրության իրավիճակներ ստեղծի, երբ երեխաներն իրենք են ընտրում արտադասարանական աշխատանքի ձևերը, որոնք կուզենային իրականացնել: Ինքնուրույնությունն ու նախաձեռնելու ունակությունը, պատասխանատվության զգացումն ու անկեղծությունը, ուրիշների հետ համագործակցելու կարողությունը այն հատկանիշներն են, որոնք դասղեկը պետք է զարգացնի իր սաների մեջ:

Ցանկացած դաստիարակչական աշխատանք կատարելիս ուսուցիչը պետք է լինի իր աշակերտների խաղընկերն ու գործընկերը, իր օրինակով սովորեցնի ճիշտ հաղորդակցվել, համագործակցել:

Արտադասարանական միջոցառումների կազմակերպման ժամանակ դասղեկը պետք է հաշվի առնի դրանց ուսուցանող և դաստիարակչական նպատակները: Յուրաքանչյուր միջոցառում երեխաների մեջ պետք է ձևավորի հետաքրքրություն դպրոցի և ուսումնասիրվող առարկաների նկատմամբ, արտացոլի տեսական գիտելիքների և գործնականում դրանց կիրառման կապը: Դասղեկի խնդիրն է նաև սովորողների գեղագիտական, բարոյական, էկոլոգիական, մտավոր, աշխատանքային, ֆիզիկական դաստիարակությունը:

Այս նպատակով կազմակերպվում է համապատասխան թեմաներով զրույցներ, այցելություն պատկերասրահ, թատրոն, արշավներ բնության գիրկ, ծանոթացնում հայրենի բնության հրաշալիքներին, քննարկում, թե դրանք ինչ արժեք են ներկայացնում մեր երկրի համար և համաշխարհային մակարդակով: Որևէ տեղ այցելելիս հիշեցնում ենք, թե ինչ հայտնի մարդիկ են այդտեղ ծնվել կամ ստեղծագործել:

Դասղեկական ժամերին կիրառվում են հետևյալ մեթոդները՝ <<Հեղինակի աթոռ>>, <<Անկյուններ>>, <<Մտագրոհ>>, <<Քարտեզագրում>>, ցածր դասարաններում՝ <<Աֆրոստիկոս>>, <<Հնգյակ>>, կազմակերպվում են նկարների ցուցահանդես կոնկրետ թեմաների շուրջ:

Դասարանի ղեկավարը պետք է ունենա պետական և ազգային մտածողություն, կայուն համոզմունքներ, կազմակերպչական ունակություններ, լավ տեղեկացված լինի երկրի սոցիալ-քաղաքական կյանքի և աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների մասին, ունենա բարձր բարոյական որակներ, լինի ազնիվ, արդարամիտ, նրբանկատ, համբերատար, տիրապետի մանկավարժական արվեստի բոլոր միջոցներին, մանկավարժական վարպետությանն ու տակտին, ունենա մանկավարժական ինտուիցիա:

Այսպիսով, դասարանի ղեկավարի դերը շատ մեծ է, որովհետև հանդես է գալիս որպես դաստիարակության գործընթացի կարգավորող, դպրոց, ընտանիք, միջավայր համագործակցության կազմակերպիչ:

Ծնողների ներգրավվածությունը դրական է անդրադառնում նաև կրթական հաստատության վրա: Ուսումնական գործընթացում ծնողների ակտիվությունը հարստացնում է դպրոցի կուլտուրան և նպաստում է նրա զարգացմանը: Այսպիսով, ավելի լավ արդյունքների հասնելու համար դպրոցը և ուսուցիչը պետք է հետաքրքրված լինեն ծնողների հետ ակտիվ համագործակցմամբ:

Երբ ծնողը ներգրավված է ավագ դպրոցականի կրթության գործընթացում, աշակերտն ավելի լավ ձեռքբերումներ է ունենում, չնայած այն բանին, թե ինչպասին է ընտանիքի սոցիալ – տնտեսական կարգավիճակը, էթնիկական ծագումը կամ ծնողների կրթության մակարդակը:

Դպրոցականը, որի ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում, ավելի հաջողությամբ է ավարտում դպրոցը և ուսումը շարունակելու ավելի լավ հնարավորություններ և պայմաններ ունի:

Վիճակագրական տվյալներով, եթե ծնողները կապված չեն ուսուցիչների հետ կամ հետաքրքրված չեն դպրոցի առօրյա կյանքով, նրանց երեխաների ակադեմիական առաջադիմությունը մյուս երեխաների համեմատությամբ ավելի ցածր է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում հանգել ենք հետևյալ եզրահանգումներին.

- Ամփոփելով հարկ ենք համարում նշել, որ դպրոցի կյանքում ծնողների ներգրավվածությունը առանձնահատուկ նշանակություն ունի աշակերտների հաջողության համար: Ինչպիսին էլ որ լինի ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակը, ծնողի մասնակցությունը երեխայի կրթության գործընթացին, աշակերտի զարգացման վրա մեծ ազդեցություն է գործում:
- Հետազոտումների համաձայն, դպրոցականները, որոնց ծնողները ակտիվորեն մասնակցում են կրթական գործընթացին, ավելի լավ արդյունքների են հասնում՝ ստանում են ավելի լավ գնահատականներ, ունեն ավելի բարձր ակադեմիական ձեռքբերում և ավելի որակով կատարած տնային առաջադրանքներ, նրանց հաճախման ցուցանիշն ավելի բարձր է և աչքի են ընկնում դրական վարքով, բարեհամբույր են դպրոցի նկատմամբ և ունեն սեփական ածի և հնարավորությունների նկատմամբ հավատ:
- Ծնողների հետ ուսուցչի աշխատանքի մեթոդներն ու ձևերը բազմաթիվ են, օրինակ՝ զրույց, բանավեճեր, դերային խաղեր, ցերեկույթներ, մրցույթներ, արշավներ և էքսկուրսիաներ, գրական ունկնդրումներ, հասարակական աշխատանք և այլն: Դրանց մի մասը իրականացվում է դասղեկական ժամերի ընթացքում կամ արտադասարանային, արտադպրոցական պարապմունքների ու միջոցառումների ժամանակ:
- Ուսուցչի մանկավարժական վարպետությունը, տակտն ու հեղինակությունը մեծ դեր են խաղում աշակերտների բարոյական դաստիարակության գործում: Ըստ ամենայնի խրախուսելով և զարգացնելով աշակերտների նախաձեռնությունն ու ինքնուրույնությունը՝ ուսուցիչը շտկում է նրանց հետ հարաբերությունների ոճը նրանց աճող ինքնուրույնության համապատասխան:
- Դպրոցականների դաստիարակության գործում մանկավարժական վարպետությունը ունի կենսահաստատ ուժ և վճռորոշ նշանակություն: Ուսուցչի մանկավարժական վարպետությունը արդյունավետ ուսուցման նախապայմանն է: Մանկավարժական վարպետությունը ուսուցչի անձնական որակների, գիտելիքների, մանկավարժական կարողությունների ու հմտությունների համադրությունն է:

- Մանկավարժական վարպետությունը, ինչպես նշում է Մակարենկոն, տաղանդավոր մարդկանց հատկությունը չէ: Դա մասնագիտություն է, որը պետք է սովորեցնել, ինչպես սովորեցնում են երաժշտին, բժշկին: Այն աճում է փորձի կուտակման, մանկավարժական գիտելիքների, մանկավարժական կրթության ընդլայնման ընթացքում:
- Ուսուցիչը պետք է լինի իմաստուն դաստիարակ, որը կարողանում է յուրաքանչյուր սովորողի մեջ տեսնել նրա անձի յուրահատկությունն ու անկրկնելիությունը, մանկավարժական ախտորոշման միջոցով պետք է խորությամբ ուսումնասիրի ամեն մի սովորողին՝ մղելով նրանց համագործակցության, հանդուրժողականության, ստեղծագործականության, ինքնատատական մտածողության խթանման, արժեհամակարգի ձևավորման:
- Դաստիարակչական աշխատանքները դասղեկը և տյուտորը պետք է նախագծեն սովորողների հետ միասին, հաշվի առնի նրանց հետաքրքրությունները, հնարավորությունները, ցանկությունները, փոխհամագործակցի ծնողների հետ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Воронов В.В., Педагогика школы: новый стандарт//В.В. Воронов// М.: ПО России, 2012.
2. Голованова Н.Ф., Педагогика: Учебник и практикум для академического бакалавриата//Н.Ф. Голованова//Люберцы: Юрайт, 2016.
3. Мандель Б.Р., Педагогика: Учебное пособие //Б.Р Мандель//М.: Флинта, 2014.

4. Щербакова Е.В., Педагогика. Краткий курс.: Учебное пособие//М.Н. Недвецкая, Т.Н. Щербакова, Е.В. Щербакова//М.: УЦ Перспектива, 2013.